ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

N02/01.91/9352-18 "27" 12 2018 թ.

«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ (ՀՎՀՀ 03308717) տնօրեն

պրն Լ. Լևոնյանին

Հասցե՝ ք. Եղվարդ, Նար-Դոս փ 28ա

Էլ. հասցե՝ sargismarianna@mail.ru

ՀՀ մշակույթի նախարարության և «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի միջև 2018 թվականի մայիսի 31-ին կնքված N «ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/34-1» ծածկագրով պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) համաձայն Ձեր կողմից պետք է իրականացվեին պայմանագրի թիվ 1 «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» հավելվածով սահմանված՝ ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ ամրոցի բաղնիքի ամրակայման, վերականգնման, օգտագործման և տարածքի մասնակի բարեկարգման գիտանախագծային ու նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները:

ՀՀ մշակույթի նախարարության և «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի միջև 2018 թվականի հոկտեմբերի 19-ին կնքված N 1 համաձայնագրով պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված աշխատանքների կատարման ժամկետը երկարաձգվել էր և սահմանվել 2018 թվականի նոյեմբերի 19-ը:

0010, Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Тел./Tel.: (010, 011) 52 93 49, ֆաքս/факс/fax (374 11) 52 39 22,
0010, Ереван, ул. Вазгена Саргсяна 3, Дом правительства 2, Government House 2, Vazgen Sargsyan str. 3, Yerevan 0010,
Էլ-փոստ/Эл.почта/E-mail: info@mincult.am, www.mincult.am

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.2 և 2.1.3 կետերի պահաջները՝ ՀՀ մշակույթի նախարարությունը 2018 թվականի դեկտեմբերի 25-ին միակողմանի լուծում է պայմանագիրը:

Տեղեկացնում ենք, որ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 14000 (տասնչորս հազար) ՀՀ դրամը որպես տուգանք՝ պայմանագրի 5.2 կետի համաձայն (պայմանագրի 4.1 կետում նախատեսված պայմանագրի ընդհանուր գնի 0.5 տոկոսը):

Միաժամանակ հիմք ընդունելով Ձեր կողմից 30.05.2018 թ. ներկայացված տուժանքի մասին համաձայնագրի (պայմանագրի կատարման ապահովում) 1.3 կետը՝ տեղեկացնում ենք, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին ենթակա է գանձման 280 000 (երկու հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամը որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում (պայմանագրի ընդհանուր գնի 10 տոկոսը):

27.12.2018

X

Подписано: MURADYAN SAMVEL 1104630109

Ս. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Կատարող՝
Ս. Գևորգյան

0010, Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Тел./Tel.: (010, 011) 52 93 49, ֆաքս/факс/fax (374 11) 52 39 22,
0010, Ереван, ул. Вазгена Саргсяна 3, Дом правительства 2, Government House 2, Vazgen Sargsyan str. 3, Yerevan 0010,
Էլ-փոստ/Эл.почта/E-mail: info@mincult.am, www.mincult.am

Հեռ.՝ 011-58-58-51
Ն. Կարապետյան
Հեռ.՝ 011-58-51-78

0010, Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Тел./Tel.: (010, 011) 52 93 49, ֆաքս/факс/fax (374 11) 52 39 22,
0010, Ереван, ул. Вазгена Саргсяна 3, Дом правительства 2, Government House 2, Vazgen Sargsyan str. 3, Yerevan 0010,
Էլ-փոստ/Эл.почта/E-mail: info@mincult.am, www.mincult.am